ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.04.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/75

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.04.2020թ. թիվ 26/26-1/5136-2020 գրությամբ «Մաքրության աշխատանքներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Արմավիր» ջրօգտագործողների ընկերության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 03.04.2020թ. գրության հիման վրա 07.04.2020թ. թիվ 26/26-1/5136-2020 գրությամբ նախաձեռնել է «Մաքրության աշխատանքներ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Մաքրության աշխատանքներ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Մաքրության աշխատանքներ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/75 ընթացակարգի շրջանակներում 16.04.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Արմավիր» ջրօգտագործողների ընկերության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Արմավիր» ջրօգտագործողների ընկերությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.04.2020թ. գրությամբ հայտնել է, որ «Արմավիր» ջրօգտագործողների ընկերության կարիքների համար գարնանային նախապատրաստական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՐՄ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-20/4» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցած «Մաքրության աշխատանքներ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ներկայացված չի եղել Ընկերության կողմից լրացված թերությունների ակտերի բացվածքը:

Ընկերությանն անհամապատասխանությունը շտկելու համար տրամադրվել է մեկ աշխատանքային օր՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետը և 41-րդ կետը: Սակայն, Ընկերության կողմից հատկացված ժամանակահատվածում չի ներկայացվել արձանագրված անհամապատասխանության շտկված տարբերակը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ Պատվիրատուն ներկայացրել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, «Մաքրության աշխատանքներ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը և Ընկերությանն ուղղված ծանուցումը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/75 ընթացակարգի շրջանակներում 16.04.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/75 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/75 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Արմավիր» ջրօգտագործողների ընկերության կողմից իր կարիքների համար գարնանային նախապատրաստական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՐՄ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մաքրության աշխատանքներ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Ընկերության կողմից չի ներկայացվել իր կողմից լրացված թերությունների ակտի բացվածքը:

3. Նույն արձանագրությամբ հանձնաժողովը որոշում է կայացրել Ընկերությանը տրամադրել մեկ աշխատանքային օր անհամապատասխանությունները շտկելու համար:

4. Նույն օրը՝ 13.02.2020թ. ժամը 17:02-ին, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից info.gnumner@bk.ru էլեկտրոնային փոստի հասցեից Ընկերությանն ուղարկվել է ծանուցում, որի համաձայն՝ Ընկերությանն առաջարկվել է սահմանված կարգով՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 14.02.2020թ., թերությունների ակտերի բացվածքը ներկայացնել ՀՀ, ք. Երևան, Սարմենի 1 2/1 հասցեով:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից չի ներկայացվել թերությունների ակտերի բացվածքը, ուստի Ընկերության հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.04.2020թ. թիվ 26/26-1/5136-2020

գրությունը, «Արմավիր» ջրօգտագործողների ընկերության 03.04.2020թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում

հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 2-րդ ենթակետի բ. պարբերությամբ սահմանվում է, որ գնահատող հանձնաժողովը գնահատում է բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե նույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է՝ ներառյալ, եթե մասնակիցը նույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Արմավիր» ջրօգտագործողների ընկերության կողմից իր կարիքների համար գարնանային նախապատրաստական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՐՄ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մաքրության աշխատանքներ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Ընկերության կողմից չի ներկայացվել իր կողմից լրացված թերությունների ակտի բացվածքը:

Նույն արձանագրությամբ հանձնաժողովը որոշում է կայացրել Ընկերությանը տրամադրել մեկ աշխատանքային օր անհամապատասխանությունները շտկելու համար:

Նույն օրը՝ 13.02.2020թ., Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Ընկերությանն ուղարկվել է ծանուցում, որի համաձայն՝ Ընկերությանն առաջարկվել է սահմանված կարգով՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 14.02.2020թ., ներկայացնել թերությունների ակտերի բացվածքը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից չի ներկայացվել թերությունների ակտերի բացվածքը, ուստի Ընկերության հայտը մերժվել է:

Այսպիսով՝ «Մաքրության աշխատանքներ» ՍՊ ընկերությանը **13.02.2020թ. ժամը 17:02-ին** info.gnumner@bk.ru էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկվել է ծանուցում, որի համաձայն՝ Ընկերությանն առաջարկվել է սահմանված կարգով՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 14.02.2020թ., թերությունների ակտերի բացվածքը ներկայացնել ՀՀ, ք. Երևան, Սարմենի 1 2/1 հասցեով:

Գնահատելով վերոգրյալը՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությանն անհամապատասխանությունների շտկման համար տրված մեկ աշխատանքային օր ժամկետը հաշվարկվել է սխալ, որի արդյունքում Ընկերությանը չի տրամադրվել Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետը:

Այսպիսով՝ գտնում եմ, որ «ԱՐՄ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-20/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով, Կարգի 41-րդ և 42-րդ կետերով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընթացակարգն անցկացվել է վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ, հետևաբար գտնում եմ, որ ոչ իրավաչափ Ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության, ուստի հնարավոր չէ արձանագրել «Մաքրության աշխատանքներ» ՍՊԸ-ի

կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, ուստիև գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.04.2020թ. թիվ 26/26-1/5136-2019 գրությամբ «Մաքրության աշխատանքներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**